

րում թուականիս ՌՉԵ (1626) ամի. անդէն վախճանեցաւ եւ անդէն թաղեցաւ»: Ուրիշ տեղ մը գրէ (366). «Կաթողիկոսն Մեղքիսեթ, որ զնայր ի Կամենից, իբրեւ եհաս անդր, զկնի սուղ ինչ աւուրց հիւանդացաւ եւ մեռաւ իսկ յազուհացից պահոցն, ի Մաղկազարդի չարաթ օրն, ի տօնի Յարութեան Ղազարու, ի մերում թուականին ՌՉԵ (1626). եւ անդէն թաղեցաւ»:

Հ. Մ. Չամչեան (Գ. 599) վաղաժամ համարելով այս «ՌՉԵ» տարին՝ կը սրբադրէ «ՌՉԷ» (1628): Օրմանեան (Բ. § 1639) անփոփոխ պահելով Դաւրիժեցւոյ «ՌՉԵ» ընթերցուածը՝ Կաթողիկոսին մահը կը նշանակէ «1626ին, ի տօնի Յարութեան Ղազարու, որ է ըսել ապրիլ 1ին» եւ կը յաւելու՝ «Յիշատակարանի մը մէջ 1628ին՝ ի հայրապետութեան տեառն տէր Մէլքիսէթ կաթողիկոսին, կարգացուած ըլլալը (Տաշեան՝ Յուլյ., 708) պարզապէս հայկական թուականին մէջ Ե. եւ է. թուատառերու շիտթութեան հետեւանք է [տես ծան. 23]. զի Մեղքիսեթեկի մահուան թուականը ստուգուած է»: Կը սխալի Օրմանեան:

Մեղքիսեթեկի մահուան ստուգուած տարին, ամիսն եւ օրն է 1627, Մարտ 18, ինչպէս նշանակած է Ռոչքա²¹: Նկատմամբ

²¹ Հետեւելով նոյն ժամանակագրին «յ18 Մարտի 1627» նշանակած է նաեւ Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 231: Հակառակ այս ըմբռնման՝ Հ. Ալիշան, Կամենից, 137, Ռոչքայի վերոյիշեալ տեղքը զեռեղած է